ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ ՄԱՐԿՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Ի պատասխան Ձեր 15.11.2021թ. N187 գրության, տեղեկացվում է.

Աջափնյակ վարչական շրջանի 16-րդ թաղամասից մինչև Գ. Չաուշի անվան հ.188 հիմնական դպրոց տանող ճանապարհի մայթերի կառուցման մասին հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության և Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի մասնագետների հետ համատեղ: Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 18.11.2021թ. գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ վարչական շրջանի ծրագրով իրականացվող եզրաքարերի տեղադրման և ասֆալտապատման աշխատանքներն ավարտվել են: Ուստի՝ Աջափնյակ վարչական շրջանի 16-րդ թաղամասից մինչև Գ. Չաուշի անվան հ.188 հիմնական դպրոց տանող ճանապարհի հատվածում մայթերի կառուցման աշխատանքները կընդգրկվեն առաջիկա նմանատիպ աշխատանքների ծրագրերում:

Ինչ վերաբերում է Գ.Չաուշի հրապարակից 16-րդ թաղամաս տանող ճանապարհին հետիոտնի համար մայթի կառուցման խնդրին, տեղեկացվում է, որ այն տեխնիկապես հնարավոր չէ՝ ճանապարհի երթևեկելի մասի նեղացման պատճառով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ